

M.R. BADADYAN

STRUCTURAL TYPES OF PHRASEOLOGICAL UNITS WITH ANIMAL NAMES CHARACTERIZING HUMAN QUALITIES IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

The structural types of phraseological units with animal names characterizing human qualities in Armenian, Russian and English have been compared and analyzed. The study of phraseological units reveals similarities and differences between the units of the three languages.

Keywords: phraseology, feature, comparison, study, linguistics, phraseological unit, similarities, differences.

ՀՏԴ 82-94«19» (479.25) (556)

Մ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

20-րդ դարի հայ հուշագրությունն առատ նյութ է մատակարարում հայ-քրդական բախտորոշ առնչությունները խորությամբ ըմբռնելու համար, ինչը խիստ այժմեական է: Միայն 11-12-րդ դարերից Հայկական բարձրավանդակում հայտնված քրդական սակավաթիվ աշիրեթներն արդեն 20-րդ դարասկզբին կազմում էին Արևմտյան Հայաստանի բնակչության գրեթե կեսը, իսկ 21-րդ դարում՝ բացարձակ մեծամասնությունը:

Առանցքային բաներ. հուշագրություն, հայ-քրդական հարաբերություններ, ազգային լեզու, կրոնափոխություն:

Ներածություն: Բագրատունիների պետականության անկումից հետո (1045թ.) սկսված ծավալուն արտագաղթը, որը սաստկացավ թյուրքական ցեղերի (ապա՝ մոնղոլների)՝ Հայկական բարձրավանդակ ներխուժմամբ (սկսած 1047թ.-ից), ծնունդ տվեց հայկական միջնադարյան գաղթավայրերին, ինչը հայ պատմագիտության ուսումնասիրված խնդիրներից է:

Չընդհատված արտագաղթով պայմանավորված ուժացումից առավել էական է հենց բնօրրանում հայերի քրդացման, մասամբ նաև թրքացման պատճառների և հետևանքների խնդիրը: 11-12-րդ դարերում Հայկական լեռնաշխարհում հայտնված քրդական ոչ մեծաքանակ ցեղերն ընդամենը մի քանի դար անց կազմեցին պատկառելի մեծամասնություն: Հայ ազնվականական շատ տոհմեր, մանավանդ թյուրքական արշավանքներից հետո, իրենց սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակչության հոծ զանգվածներով այդ պատմաշրջա-

նում արտագաղթեցին Բյուզանդական կայսրության արևմտյան խորքերը, ուր և դարերի ընթացքում որպես հայ կորսվեցին. բայց դա հիմնական պատճառ չէր կարող դառնալ լեռնաշխարհում հարյուրամյակներ շարունակ ունեցած բացարձակ մեծամասնության դերի կորստի համար: Թյուրքական իշխանությունների կրոնական խտրական պարտադրանքներից փրկվելու համար շատ ժողովուրդների հոծ զանգվածների պես (օրինակ՝ մեծ թվով սերբեր իսլամացան, որ հետագայում կոչվեցին բոսնիացիներ, վրացիներ իսլամացան, որ հետագայում կոչվեցին աջարներ և այլն) մեծաթիվ հայեր ևս իսլամ ընդունեցին: Հայերի պարագայում դա երևակվում է միայն մեկ ազգագրական շրջանում՝ Համշենում, ուր իսլամ ընդունած հայերը *պահեցին հայերեն բարբառը*, թեև կտրվեցին ընդհանուր հայկական մշակութային օրգանիզմից: Այն տարածքներում, ուր իսլամ բնակչության մեծամասնությունը թուրքական էր, իսլամացած հայերը հրաժարվեցին նաև լեզվից և դարձան թրքախոս (2. Եսայանը բազմիցս անդրադառնում է, որ Կիլիկիայի շատ վայրերում հայերը թրքախոս էին, սակայն հպարտությամբ նշում է, որ Չոք Մարզվանում «գրեթե ամենքն ալ հայերէն կը խօսէին, թէեւ իրենց ընտանի լեզուն թրքերէնը ըլլար. դիտեցինք նաեւ որ պառաւանդներն բարբառը աւելի հարագատ էր, ինչ որ կը նշանակէր թէ ասկէ մէկ երկու սերունդ առաջ հայերէնը նոյնքան ընտանի էր իրենց» [1]), այսինքն՝ թրքացան [2]. Իսկ այդպիսի տարածքները հիմնականում համեմատաբար խոշոր քաղաքներն էին և կայսրության արևմտյան հատվածը: Հայկական բարձրավանդակի արևելյան մասը, որտեղ իսլամ բնակչությունը ներկայացված էր քրդերով, իսլամացած հայերը, հայերենից հրաժարվելով, դարձան քրդախոս, այսինքն՝ քրդացան: Իսկ հայության հիմնական զանգվածը բնակվում էր հենց պատմական հայրենիքում՝ կայսրության արևելյան մասում, այսինքն՝ իսլամացած հայերի գերակշիռ մեծամասնությունը քրդացավ: 12-20-րդ դարերի ընթացքում՝ 8 դար շարունակ, պատմական հայրենիքում ընթացել է քրդացման գործընթաց: Մեծ եղեռնի նախօրեին Հայկական բարձրավանդակում քուրդ տարրը, իր էթնոսի մեջ ներառելով այդ վարար աղբյուրը, արդեն գրեթե հայերի չափ էր:

Հայերի քրդացման հարցում երկրորդ խոշոր գործոնը լատենտ հոգեբանականն էր: Իր վարած քաղաքականությամբ իսլամացման դրդիչը թուրքական իշխանությունն էր, ուստի բնական է հենց նրան հակառակելու բնագոյային մղումը: Չկարողանալով հակառակությունն արտահայտել ազգային պատկանելությունը պահպանելով՝ նախընտրելի էր համարվում չթուրքանալը. մնում էր քրդանալը: Սրան գումարվում է շատ պրագմատիկ հաշվարկը. շրջապատը իսլամ քրդական է, ուստի հողային, արոտավայրային, սեփականական, ինչպես նաև հոգևոր-մշակութային հարաբերությունները հիմնականում լինելու էին քրդերի հետ, ինչը

դարձյալ նախընտրելի էր դարձնում նրանց հետ ոչ թե հակառակության մեջ մտնելը, այլ էթնիկ լանդշաֆտին բնականորեն ներդաշնակվելը՝ անվտանգության և շահավետության նկատառումներից ելնելով: Անշուշտ, այսպիսի հաշվարկներ պիտի արած լինեին իրենց լիազորությունները կորցնել չցանկացող հողատեր հայ ազնվականական տների մնացորդները, որոնց քրիստոնյա լինելու հանգամանքի պատճառով կենտրոնական իշխանությունն արգելել էր զենք կրելը, ձի հեծնելը, կառավարության առջև վկայություն տալը, սեփականությունից ազատորեն օգտվելը, ինչպես նաև բոլոր քրիստոնյաների համար նախատեսված էին լրացուցիչ հարկեր [3]:

Խնդիրը ոչ այնքան իսլամացումն է, որ, ինչպես նշվեց, հանդիպում է այլ քրիստոնյա ժողովուրդների մոտ ևս, այլ լեզվի՝ հոգևոր ամենազորեղ պաշտպանի կորուստը: Խնդիրն ավելի խորն էր և կապված ոչ միայն իշխող էթնոսի պարտադրման հետ, այլև միջավայրին ձուլվելու հայ տարրի իմունահամակարգի թուլացման հետ: Դեռևս 19-րդ դարի կեսին Լազարյան ճեմարանի «նախակրթարանում ուսուցման պրոցեսը կապված էր մեծ դժվարությունների հետ. Ընդունվում էին այնպիսի երեխաներ, որոնք, մոռացած հայոց լեզուն, խոսում էին չերքեզերեն, պարսկերեն, թուրքերեն, ռուսերեն...» [4]: Այս կարևոր խնդրի բոլոր պատճառները մինչև վերջ չեն հետազոտվել հայ քաղաքական մտքի կառավարիչների և հայ մշակութաբանության կողմից. հատկանշական է, որ աղոտ կերպով դրվագվել են միայն 19-րդ դարավերջի հայ գեղարվեստական գրականության և 20-րդ դարի հայ հուշագրության մեջ: Իսկ դա, իրոք, թե՛ մշակութաբանական լրջագույն խնդիր է, թե՛ 21-րդ դարում քաղաքական հանգուցալուծումների և պետական անվտանգության ռազմավարական նշանակության կարևորագույն հարց: Ներկայումս Արևմտյան Հայաստանի երկու տասնյակ միլիոն բնակչության ավելի քան 80 տոկոսը քրդեր են, որոնց ծագման մեջ հայկական գենը, մանավանդ Մեծ եղեռնից փրկված հարյուր հազարավոր հայ մանուկների, կանանց և տղամարդկանց քրդացումից հետո, միտում է բացարձակության:

Հայ-քուրդ հարաբերությունների խնդիրն արդիական է եղել նաև Մեծ եղեռնի նախօրյակին, երբ «Հայ-քրդական համերաշխութիւն ստեղծելու փորձեր ըրին մեր ընկերները նաև Վասպուրականի մէջ,- Արամ, Իշխան, Վ.Փափագեան, Վռամեան, Մալխաս և այլն..., որը մնաց ծայն բարբառոյ յանապատի», - գրում է նշանավոր դաշնակցականը՝ արձանագրելով, որ քրդերը դարձան կույր գործիք «հայ դատը խոշտանգելու, հայութիւնը բնաջնջելու նպատակով...» [5]:

Կես-կեսի տարածաշրջանը: Արևմտյան Հայաստանի Աղձնիք նահանգի (Դիարբեքիրի վիլայեթ) Բալուի գավառակի Օխու (այլ անվամբ՝ Եղ) փոքրիկ գյուղի մասին է Բարունակ Թոփալյանի «Հայրենի գյուղս. Օխու» հուշագրությ-

յունը, որը տիպական է հետեղեռնյան այդ շրջանի սփյուռքահայ գրեթե բոլոր հուշագրությունների համար:

Հեղինակի ոչ բավարար կրթության *շնորհիվ* (Սփյուռքահայ բնցքամարտիկ Հ. Թոմփայանի հուշագրության առաջաբանում Անդրանիկ Ծառուկյանն ուշադրություն է դարձնում նմանատիպ հանգամանքին՝ գրելով, թե հեղինակը գրագետ չէ, սակայն հենց դա՛ է ավելի հաճելի դարձնում գրքի ընթերցումը [6]). այս հուշագրությունն իր տեսակի մեջ ամենաանկեղծ վկայություններից է Արևմտյան Հայաստանի մի փոքրիկ բնակավայրի մասին (Յ.Քիրտեանը գրում է. «Թոփալեան իր Յառաջաբանին մէջ որոշ է թէ չի ըմբռներ իր գործին կարեւորութիւնը եւ կատարեալ յաջողութիւնը» [7]), որ, գիտական խմբագրման ենթարկվելուց հետո, միանգամայն արժանի կլիներ զետեղվելու «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարում: Հեղինակը մանրամասն քարտեզագրում է գյուղը, վիճակագրական հնարավորինս ճշգրիտ տվյալներ հաղորդում բնակչության կազմի մասին, նկարագրում գյուղի կենցաղավարումը, ապրելակերպը, միջանձնային հարաբերություններն ու տոհմային հիերարխիկ կառույցը: Այս հուշագրությունը, որպես նմուշօրինակ, առանձնացնելի է հիմնականում այն պատճառով, որ բավականին հաջողված միջոց է *20-րդ դարի հայ հուշագրության մի կարևոր պրորբեսի*՝ քրդացած հայերի թեմայի քննության համար:

Թոփայանի տեղեկատվությունը միանգամայն համատեղելի է Հայաստանի այլ շրջանների մասին մյուս հուշագրողների և արհեստավարժ բանահավաքների ու ազգագրագետների արձանագրած փաստերի հետ: Օրինակ՝ նահապետական ընտանիքի մասին կարելի է այսպիսի հիշատակումներ տեսնել տասնյակ այլ աղբյուրներում. «...մեր տան անդամներու թիւր... կը հասնի 65-70-ի: Հակառակ այս մեծ թիւին, հակառակ այժմ անհասկանալի, աներեւակայելի թուող այն իրողութեան, որ չորս եղբայրներ իրենց զաւակներով, հարսներով ու թոռներով մէկ յարկի ներքեւ կ'ապրէին, միասին կ'աշխատէին ու իրենց ամբողջ վաստակը միասին կը հաւաքէին, ոչ մէկ վէճ ու կռիւ կար մեր նահապետական տան մէջ» [8, 65]: Մեկ այլ օրինակ, որ կարող է նյութ ծառայել պատմական և, մանավանդ, բանասիրական հետազոտությունների համար. ի տարբերություն մինչ այժմ ժողովրդի մեջ կիրառվող «*ազապ-բաշի*» արաբա-թուրքախառն արտահայտության, Օխուի բնակիչները մաքուր հայերենով «*փեսա-մանուկ*» ձևն էին պահպանել՝ «հակառակ այն իրողութեան, որ մեր կողմերը շատ քիչ թուրքեր կային, այս գովերգը [հարսանեկան ծեսերում] կ'երգուէր թուրքերէն» [8, 44]. Օխուն գտնվում էր քրդական միջավայրում:

Ամենայն հավանականությամբ, Թոփայանը բանիմաց խորհրդատուներ, ապա և՛ խմբագրողներ է ունեցել, քանի որ իր գրքում փրկել և տեղ է հասցրել

Օխուի նույնիսկ բանահյուսական որոշ նմուշներ, որոնք այլ աղբյուրներից գտնելն այլևս անհնար է: Այս հարաբերության մեջ կարևոր արձանագրում է, որ հայախոս հայ գյուղացիները կոնկրետ ֆիդայու այցելության առթիվ փառաբանական երգ են հորինում, և այդ երգը քրդերեն է (հեղինակը քրդերեն տեքստի հետ գրքում տալիս է երգի հայերեն թարգմանությունը [8, 152]). ավելին՝ հայ գիտակցության մեջ նույնիսկ շատ էր համարված այդ հայ ֆիդայու քրդակերպ աղավաղված *Կրպո* (հավանաբար՝ Կարապետ) անունը, և ֆիդային ներկայանում էր և հայտնի էր *Քեաֆիր Հեմզո* անունով: Եվ սա ամենևին կապ չունի հեղափոխական կամ ազգային շարժմամբ թելադրված գաղտնապահության, ծպտյալության անհրաժեշտության հետ, այլ հայ ազգային ինքնապահպանական իմունահամակարգի ոչ մխիթարական վիճակի ամենաեական ցուցիչներից է այնքանով, որքանով լեզուն ազգային ինքնության ամենաառաջին ցուցիչն է եղել և է հայության ինքնանույնականացման համակարգում: Սա, անշուշտ, ունի հոգեբանական այլ ենթաշերտ ևս, ինչը հատուկ է մարդկային հասարակական բոլոր տիպերին, երբ արտաքին աշխարհի այս կամ այն երևույթն ասոցացնելու, «սեփականելու» համար գործել է մետաֆորների բարդ համակարգ՝ սկսած շրջակա ոչ մարդկային (կենդանական, բուսական, նույնիսկ՝ անօրգանական) աշխարհի որոշակի տեսակների նմանակմամբ ծիսական ու կենցաղային արդուզարդ և տարազ ձևավորելուց (փետուրներ, մորթիներ, ծաղիկներ) մինչև անձնանուններ (հայերենում, օրինակ, Վարազ, Մանուշակ, Լեռնիկ և այլն): 19-20-րդ դարագլխի հայությունը ևս, ուժն ասոցացնելով իր շրջապատում տեսանելի հանրույթի՝ խմբի հետ, այդ ուժը տեսել է քրդի մեջ, ուստի սեփական ուժը ցուցադրելու, «սեփականելու» համար ընտրել է քրդի անուն: Սա երևում է հայ ժողովրդի համար ամենապանծալի անունների պարագայում ևս, երբ չնայած անունը չփոխելով՝ վերցվում էին քրդի կամ թուրքի պատվանուններ, երբ նրանք հաճախ այդ տիտղոսները պարզապես չունեին (Սերոբ փաշա, Անդրանիկ փաշա, Արամ փաշա և այլն):

Երրորդ ենթաշերտը, որ ազգագրագետների ուշադրությանն արժանի իրողություն է, հարևանած ժողովուրդների մշակութային օբյեկտիվ փոխներթափանցումներն են, թեև հարկավոր է արձանագրել, որ առնվազն անձնանունների և տեղանունների հարցում թուրքերի կամ քրդերի մեջ չեն հանդիպում հայկականներ. սա մեկ թելով կապվում է վերոհիշյալ ազգային իմունահամակարգի, մյուս թելով՝ մշակութային կարգաբանության ազգային գիտակցման հետ:

Թուփայանը բազմիցս նկարագրում է «*կես հայ – կես քուրդ*» [8, 20-23, 30, 48] մարդկանց, նրանց քրդանալու դրդապատճառները, որոնք կարող են նոր երանգ հաղորդել այդ ողբերգական գործընթացի արդեն հայտնի դինամիկան առավել հստակեցնելիս: Բազում հատվածներում նկարագրում է քրդերի որոշ

ցեղերի՝ քրիստոնեական ծեսեր ունենալը, քրիստոնեական սրբատեղիների հանդեպ պատկառանքը, սնոտիապաշտության աստիճանը և այլն: Հեղինակն այսպիսի ոչ անհիմն եզրակացություն է անում. «Անհաւանական չէ որ Խուրուճանի այս ժայռերուն թառած ու ծերպերուն մէջ ապաստանած այսօրուան քիւրդերը մնացորդներն էին անոնց, որոնք օր մը իբրեւ հայեր կ'ապրէին քաղաքակիրթ կեանք մը Սուգէ Մէրանի մէջ, որուն աւերակներու եւ խոշոր սրբատաշ քարերու վրայ գրուած էր իրենց պատմութիւնը, որ մեզի անծանօթ մնաց» [8, 30]: Այս մոտեցման համար հիմք է ծառայել հայրենի գյուղի օրինակը: Թոփայանն արձանագրում է. «Օխու գիւղի 32 տուն հայերուն հետ իբրեւ դրացիներ կ'ապրէին 25 տուն քիւրդեր, որոնք առհասարակ զինուած էին եւ իրենց քով դաշոյնը անպակաս էր: Հայերուն զէնք կրելը արգիւրուած էր կառավարութեան կողմէ: ...Մեր դրացի քիւրդերէն շատեր հայկական ծագում ունէին: Հայ ժողովուրդի կրած դարատոր հալածանքներուն, անիրաւութիւններուն չդիմանալով մեր շրջանի հայերուն ալ մէկ մասը քրդացեր էր...

Այս իրողութեան ծանօթ պատանիները չարաճճիօրէն կը ծաղրէին այս հայութենէ քիւրդ դարձածները՝ կոչելով զանոնք *կէս-կէս*: Հակառակ մերիններու այս արհամարհական վերաբերումին՝ անոնք իրենք զիրենք մեծապէս պատուուած կը զգային երբ հայ դրացի մը երթար իրենց տունը:

...Օխու գիւղի հայ եւ քիւրդ դրացիներու յարաբերութիւնները առհասարակ լաւ էին, որքան ատեն որ այդ քիւրդերը չէին իյնար շրջաններու քիւրդերու եւ թուրքերու ազդեցութեան տակ...» [8, 20-21]:

Այսպիսի հիշատակությունը մոտավորապէս նոյն տարածքի մասին գիտական շրջանառության մեջ դրված փաստերը լրացնելու և տարածաշրջանի ազգագրական կազմի մասին պատկերացումները հստակեցնելու կարևոր աղբյուր է: Հասարակական և կուսակցական գործիչ Գ.Հալաջյանը հետագայում գրում էր. «1914թ., գարնանը անձամբ հյուր եմ եղել կրոնապետ սեիդ Ռ-գայի՝ ալեվիների եպիսկոպոսի մոտ և մեծ դժվարությամբ տեսել եմ մի շարք ձեռագիր ավետարաններ, գրչագիր մագաղաթներ, որոնց կարգին մի ձեռագիր օրինակ Մովսէս Խորենացու «Հայոց պատմությունից»: Խոսակցության ընթացքում պարզվեց, որ ձեռագիրը վերցրել են նրանց նախնիները ս.Կիրակոս վանքից, ուր պաշտոնավարել են, և իրենցը նկատում էին դրանք, սակայն առանց հասկանալու լեզուն և կարենալ կարդալու» [9]:

Թոփայանի հուշագրության մեջ ուշագրավ են ոչ այնքան քրդերի կողմից հայերի հանդեպ հալածանքների կոնկրետ դեպքերի նկարագրությունները, որոնք հայտնի են 1870-ականների հայ մամուլից և գեղարվեստական գրականությունից, որքան քրդերի հոգեկերտվածքի բացահայտումները: Այսպէս.

Թոփայանը նկատել է. «Քիւրդ պէկերը գիտեն իրենց առած քայլին իմաստը: Ատով կը վիրաւորեն մեր ընտանեկան սրբութիւնը, կը վիրաւորեն մեր ազգային արժանապատուութիւնը և այդպէսով կը կոտորեն հայ մարդու բարոյական կորովը եւ կը դարձնեն զայն գլխիկոր» [7, 99]: Բայց՝ «Քիւրդերը, ինչպէս եւ թուրքերը միայն այն ատեն բաները շիտակ կը տեսնեն, երբ իրենց դէմ ուժ տեսնեն» [8, 103]:

Մեկ հայ՝ մեկ ոսկի: «...Սէպիլի մէջ, այսպէս, հազարաւոր Հայ տղաք ու աղջիկներ ծախված են հալէպցի Արաբներու, թուրքերու եւ Հրեաներու: Ընդհանրապէս փոքր տղաքը յարգի էին, 7-10 տարեկան, մանաւանդ աղջիկները» [9, 209],- իր հուշագրութեան մէջ վկայում է Երվանդ Օտյանը՝ մանրամասնելով. «...Ամէն ոստիկանի, ամէն զինուորականի, ամէն պաշտօնեայի քով առնուազն մէյմէկ Հայուհի կը գտնուէր» [10, 384]: Դեռ 1916թ. ստեղծվեց *Որբահավաք առաքելութիւն*, որը ռուսների կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքում սկսեց հավաքել մահմեդական ընտանիքներ տարված հայ որբերի, կանանց և իրավագուրկ վիճակում բանող տղամարդկանց: Սերաստացի Մուրադը «կոչ մը հրատարակեց Կովկասի հայ թերթերուն մէջ՝ *Մէկ հայ՝ մէկ ոսկի*ի ֆոնտ մը կազմելու, եւ այդ դրամով հայեր ազատելու զանազան շրջաններէ», - քաղաքական հուշագրութեան մէջ նշում է Սասունին [11]: Այդ հարցում Մուրադի գործակիցն էր մեկ ուրիշ հայդուկապետ՝ Սեպուհը (Արշակ Ներսիսյան): Ազգային մեծագոյն ողբերգութեան մէջ սա կարող է ընկալվել ոչ առաջին կարևորութեան խնդիր, մինչդեռ հենց սա՛ էր *դեպի ասպազան հայացք* ունեցող անհատների համար թե՛ ողբերգութիւն, թե՛ գերագոյն գործունեութեան ասպարեզ, որին հետագայում անդրադարձավ Չարենցը՝ մի ամբողջ պոեմով, ուր առանցքում «*նահրյան սերմն*» է, որ քշում են թշնամի և հայրենի քամիները [12] (*հայրենի*ի պահը Չարենցի համար ավելացել էր խորհրդահայ ղեկավարութեան՝ Մոսկվայի քաղաքականութեան հետևանքով):

Պոլսում 1925թ. քրդական ապստամբութիւն կազմակերպելու մեղադրանքով ձերբակալված և Սերաստիայի բանտ տարված և Պոլսից Մալաթիա ճանապարհի ամեն բնակավայրում ցեղասպանութիւնից փրկված հայկական խնամքների հանդիպած Գևորգ Հալաջյանը քուրդ բանտարկյալ աշիրաթապետերի միջոցով մարդահամար է կազմակերպում և թվերով ներկայացնում. ըստ հուշագրողի՝ Արեւմտյան Հայաստանի գավառներում հայերի թիվը կազմել է 44630. այս թիվը չի ներառում լավ ծպտվածներին, քրդերի կողմից թաքցրած որդեգրվածներին, հարեմներում անհայտ մնացածներին, իրենց ինքնութեան մասին ընդհանրապէս տեղեկութիւն չունեցող այն որբերին, որոնք ցեղասպանութեան տարիներին շատ փոքր են եղել՝ ինքնութիւնը հիշելու համար: Վերջինները բազմապատիկ ավելի

էին, քան այն, ինչն անվերապահ էր, որը և հանրագումարի բերելով ներկայացնում է. «Թուրքահայաստան – 45000, Իզմիր, Պրուսա, Էտիրնե – 3000, Պոլիս՝ արուարձաններով միասին – 80000. Գումար – 128000» [13]:

Նույն ժամանակի համար թուրք-քուրդ-հայ եռանկյունու մասին Օսյանը եզակի, նուրբ, անտեսված և արդիական մի տեղեկություն է հուշագրում. «Ինչպէս ըսի, Սուլթանիէի մէջ կային մէկ քանի հարիւր քիւրտ փախստականներ եւ նոյնչափ ու թերեւս քիչ մը աւելի Հայ տարագիրները: Երկու ազգերուն միջեւ եղած տարբերութիւնը, իրենց բարքերն ու նկարագիրը, որոշ կ'երեւային այդ տառապանքի դրացնութեան մէջ: Քիւրտերը գրեթէ մեծ մասով, այդ թէ կին, անգործ կեանք մը կ'անցնէին եւ բոլորովին բեռ էին թուրքերուն վրայ որոնք ստիպուած էին կերակրել զանոնք: Հայերը ընդհանրապէս մէյ-մէկ գործ գտած էին ապրուստնին ճարելու, նոյնիսկ դրամ շահելու համար: Բացի խանութպաններէ, կային դերձակներ ու դերձակուհիներ որոնք բաւական գործ կ'ընէին: Շատ Հայ կիներ թուրքերու տունը կերակուր կ'եփէին կամ ծառայութիւն կ'ընէին, ուրիշներ գորգագործութեամբ կը զբաղէին, շատեր բուրդ կը մանէին: Թաղապետութիւնը ընդարձակ պարտէզ մը ունէր զոր Հայերը կը մշակէին: Փռուի մէջ հաց պատրաստողները Հայեր էին նմանապէս: Քիւրտերը իրենց բնական տուները աւերակի վերածած էին, պատուհաններու ապակիները կտորած, երդիքը քակած ու փայտերը այրած էին, ինչպէս նաեւ կտորած էին տան պարտէզին մէջ գտնուած սակաւաթիւ ծառերը: Իսկ իրենց բնակարաններուն աղտոտութիւնը աննկարագրելի էր: Հայերը, ընդհակառակը, ո՛չ թէ միայն իրենց վարձած կամ ձրիաբար նստած տուները մաքուր եւ անաղարտ պահած էին, այլ նոյնիսկ, իրենց հանգստութեան համար բնականաբար, խոհանոց շինած, նորոգութեան կարօտ մասերը նորոգած էին: Նոյնիսկ իրենց տրամադրութեան ներքեւ գտնուած պարտէզները մշակած էին եւ առատօրէն դդում, տօմաթէս, բողկ, հազար, ստեպղին, եւ այլն կը քաղէին: Թուրքերը միշտ կը մերժէին վարձքով տուներնին տալու քիւրտերուն եւ ձրիաբար կը տրամադրէին Հայերուն, որովհետեւ գիտէին թէ Հայերը թէ՛ նոր պիտի պահեն իրենց բնակարանները եւ թէ՛ պիտի շէնացնեն պարտէզներ» [10, 462-463]:

Այս հակադրութեան խորքային լրացում է հանդիսանում Ա-Դոյի հուշագրութեան մի վկայություն, որ պետական ռազմավարություն ունենալու պարագայում այսօր կարող է հաշվարկման կարևոր բաղադրիչ դառնալ: Ըստ այդմ՝ Աղբակը ռուսների կողմից գրավելուց հետո քրդերն են սկսում զանգվածաբար կրոնափոխ լինել՝ մկրտվելով հայ հոգևորականի ձեռամբ. «Ո՞րն էր կրոնափոխության շարժառիթը: Այս գոեհիկ գործողությունը հնարավորություն էր տալիս կրոնափոխին նպաստ ստանալ» [14]:

Եզրակացություն: Մի ամբողջ հազարամյակ ընթացած հայերի քրդացման տեմպերն առավել ահագնացան Մեծ եղեռնի տարիներին, երբ հարյուր հազարավոր հայ մանուկներ և կանայք տարվեցին քրդական ընտանիքներ: Ստիպված քրդացան նաև այն տղամարդիկ, որոնք հնար չունեցան ելնելու Թուրքիայի սահմաններից դուրս: Այսպիսի վկայությունները, որ հիմնականում հուշագրական են, կարևորվում են առավել ևս 21-րդ դարասկզբին, երբ հայությունը ուղիղ մեկ դար անց՝ վերստին կանգնած է տարածաշրջանային դաշնակիցների ընտրության ռազմավարական բարդագույն խնդրի առջև, ուր քրդական գործոնը կրկին որոշիչ կարող է լինել: Այդ խնդրի շահեկան լուծման հարցում ոչ երկրորդական է Թուրքիայի, Իրաքի և Սիրիայի հյուսիսի քրդերի մեծամասնության ծագման արհեստավարժ շրջանառումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Եսայեան Զ.**, Աերակներուն մէջ, Կ.Պոլիս, Տպ. Մ.Տէր-Սահակեան, 1911, էջ 251-252:
2. Լեո, Խոջայական կապիտալը յեվ նրա հասարակական-քաղաքական դերը հայերի մեջ, Յեր., Պետհրատ, 1934, էջ 253:
3. **Ներսիսյան Ա.**, Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և նրանց ռուսական օրիենտացիան XIX դարի առաջին կեսին, Եր., ԵՊՀ, 1962, էջ 38-45:
4. **Իգնատյան Ա.**, Լազարյան ճեմարան, Եր., ԵՊՀ, 1969, էջ 67:
5. Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Եր., ԵՊՀ, 1992, էջ 213-214:
6. **Թոմալեան Յ.**, Բռունցք եւ ոգի (հայ կոփամարտիկի մը յուշերը), Պէյրութ, տպ. Սեւան, 1964, էջ 16:
7. «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1945, թիւ 4, էջ 111-112:
8. **Թոփալեան Բ.**, Հայրենի գիւղս. Օխու, Պոսթըն, Հայրենիքի տպարան, 1943:
9. Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ), պրակ 5-րդ, Դերսիմի հայերի ազգագրությունը (հեղինակ՝ Գևորգ Հալաջյան), Եր., ԳԱ, 1973, էջ 22:
10. **Օտեան Ե.**, Անիծեալ տարիներ. 1914-1919 (անձնական յիշատակներ), Եր., Նաիրի, 2004, էջ 209:
11. **Սասունի Կ.**, Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918). Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը՝ Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Պէյրութ, Սեւան, 1966, էջ 112:
12. **Չարենց Ե.**, Նորահայտ էջեր, Եր., ԵՊՀ, 1996, էջ 55-57:
13. Թափառական, Դէպի կախաղան, Պոսթըն, Հայրենիք, 1932, էջ 876:
14. Ա-Դո, Իմ հիշողությունները, Եր., ՀՀ ՄՆ, 2015, էջ 315:

